ծանր պարտեօք, և միաբանք նորին կապեալ յաղքատութեան որդէս յերկաթս։ Լուեալ գլխաւորաց ազգին զայս ամենայն բանս դանկատանաց զԳալուստ վարդապետէ, ընկեցին զնա յիշխանութենէ Պատրիարքութեան, և ընտրեցին 'ի տեղի նորա զՄինաս վարդապետ Ամթեցի, միաբան Ս. Երուսաղէմի. եւ ապա ելեալ գնացին բազմութեամբ առ դատաւորն Կոստանդինուպօլսոյ, եւ մատուցեալ գիր ամբաստանութեան, պատմեցին զգործս ինասապարտ Գալուստ վարդապետի, զմերժումն նորա, եւ զընտրութիւն Մինասայ. ապա խնդրեցին տալ ածել ըզ Գալուստ 'ի Կոստանդինուպօլիս, զի քննեսցին հաշիւք նորին։ Եւ դատաւորն գրեալ յայտ արար 'ի Դուռն զամենայն բանս Հայոց, և զգիրս դանկատանաց ժողովրդոցն, և զչրջիլ Գալուստ վարդապետի ելուզակարար եւ զվրդովել նորա զխաղաղութիւն ժողովրդոց, զբողոք դատաւորին Երուսաղէմի, զընտրութիւն նորոյ Պատրիարքի հաւանութեամբ ազգին, և հաստատել յիշխանութեան Երուսաղէմի զՄինաս վարդապետ։ Եւ հրաման յԱրքայէ, զի ուր եւ գտցի Գալուստ վարդապետ, ածցի 'ի Դուռն։ Եւ ապա գրեցաւ հրովարտակ կայսերական (Խաթթի Շէրիֆ) ՌՌՌ• (1699), և հաստատեցաւ Պատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի վերայ Մինաս վարդապետի։

Այլ Գալուստ վարդապետ լուեալ զանցս Կոստանդինուպօլսոյ, թագոյց զանձն իւր եւ զերծեալ 'ի ձեռաց խնդրակաց իւրոց, եհաս 'ի Թագաւորեալ քաղաք անդր. և սկսաւ արկանել զաղմուկ խռովութեան 'ի մէջ ժողովրդոց, և չարախօս լինել զՄինաս վարդապետէ. եւ սակս հասուցանելոյ նմա չարիս՝ ձեռնամուխ լինէր 'ի գործս նորա. և չրջեալ այսր անդր բամբասէր զնա, թէ սուտակասպաս բանիւք պատրեաց զժողովուրդն, և նոքօք եհան զԱրքայ 'ի կամաց իւրոց. և յանիրաւի յափշտակեաց յինէն զիշխանութիւն Պատրիարքութեան, եւ այլ սոցին նման բանիւք ջանայր հանել զնա յաչաց։

Տեսեալ Մինաս վարդապետի թէ չիք խաղաղութիւն յերեսաց չարախօսութեանց Գալուստ վարդապետի. եւ դժուարին է նմա յանդորրու վարել զիշխանութիւն իւր, յուղի անկեալ չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս. և իբրեւ ոչ